ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՍՄԳՔ ՆՈՒՀ7 ՇՀԱՊՁԲ–15/2-1/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Գորիս 9 մարտի, 2016թ.

ժամը 14:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Կ. Մինասյանը

անդամներ՝ Է. Ավագյանը, Գ. Պետրոսյանը

քարտուղար ՝ Հ. Շեգունցը

1. ՍՄԳՔ ՆՈՒՀ7 ՇՀԱՊՁԲ–15/2-1/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 25.02.2016 թ էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է ներկայացվել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր հնարավոր մասնակիցներին՝ www.gnumner.am հասցեում հրապարակված aprang-15-2@shh.gnumner.am ինտերնետային հասցեով, ինչպես նաև հրավերը տեղադրվել է www.gnumner.am կայքում:

-------------------------------------------------------------------

1.2 ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի թիվ 7 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման համար ՍՄԳՔ ՆՈՒՀ7 ՇՀԱՊՁԲ–15/2-1/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրի համաձայն հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի | |
|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն |
| 1 | <<Լիլիթ>> ՍՊԸ | ք. Գորիս, Տաթևացու 7 |
| 2 | <<Արմեն և որդիներ>> ՍՊԸ | ք. Գորիս, Քրիստափորի 44 |

1.3 Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՝ *ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Նոր վանքի տափ16* հասցեում:

*1.4 Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0*

*1.5 Տվյալներ բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը փակ ծրարներով ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում և գնի առաջարկ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճենից: Բնօրինակ փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

*1.6 Տվյալներ մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակցների կողմից ներկայացված ծրարներում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

*1.7 Մասնակցի առաջարկած գները՝*

| Չափա-բաժինների համարները | Մասնակցի անվանումը /անունը/ | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | <<Լիլիթ>> ՍՊԸ | 222 300 |
| 1 | <<Արմեն և որդիներ>> ՍՊԸ | 226 200 |
| 2-35 | <<Արմեն և որդիներ>> ՍՊԸ | 881 381 |

*(ՀՀ դրամ)*

2. Հիմք ընդունելով վերոգրյալը, ՍՄԳՔ ՆՈՒՀ7 ՇՀԱՊՁԲ–15/2-1/16 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել
   <<Լիլիթ>> ՍՊԸ-ին.- *1 չափաբաժնի համար*
   <<Արմեն և որդիներ >> ՍՊԸ *-ին - 2-35 չափաբաժինների համար:*
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
3. Ծանուցել <<Լիլիթ>> ՍՊԸ-ին–ին և <<Արմեն և որդիներ>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասին 4.3 կետի <<գ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

4. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 105 –Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն 2015 թվականի մարտի 4-ին ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցում:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

5. Հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Մինասյան

անդամներ՝ Է. Ավագյան

Գ. Պետրոսյան

քարտուղար՝ Հ. Շեգունց